և բազմերախտ ուսուցանողին իմոյ Յովհաննէս րաբունապետին, որոց ողորմի ասացէք՝ որք հանդիպիք աղաչեմ. Աստուած ողորմի ամենայն հաւատացելոց և մեզ և ծնողաց մերոց. ամէն:

Ծանոթ. *Լալայանի այցելած ժամանակ, 1910 թ. արձանագրության երեք քարերն ընկած են եղել պատի տակ. այժմ չկան։*

Հրատ. *Ջալալյանց, 114։ Ալիշան, 74։ Սմբատյանց, 628։ Լալայան, XIX, 29։*

## ԳԱՄԻՇԼՈՒ ԿԱՄ ԳԱՆԼԻ

*Գյուղի հին անունը հայտնի չէ. պահպանվել է միայն ընդարձակ գերեզմանատան մի մասը, ներկա խճուղու եզրին։ Այստեղ կան գեղաքանդակ խաչքարեր և կենցաղային քանդակներով տապանաքարեր. հները XVI դարից։*

*Մեր հավաքածուում ամփոփված են 25 արձանագրություն, որոնցից չորսն է եղել հրատարակված նախկինում։*

**1496. ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ**, *երկու հատ, շատ մեծ, օրորոցաձև, գանվում են գերեզմանատան կենտրոնում, պատկանում են մի ընտանիքի.*

**Ա. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԿՈՂԻՆ** *հեծյալ, ձեռքին կեռ գլխով մահակ, առջևին մի եղջերու և երկու գոմեշ, հյուսիսային կողին երեք խորան, մեկի մեջ ըլիթ և դավ բռնած մարդ, կենտրոնում երկու ականջանի սաղ նվագող ծալապատիկ նստած մարդ, առջևին հաց, երրորդի մեջ խաչ, հարավում, քանդակներից վեր և արևելյան ճակատին 7 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏ:Բ:ԵՂԲԱՐՑ
ԱՂԱՊԷԿԻՆՊԷ
ԿԻՃԱՆԻՆՈՐԵՆ
ՈՐԴԻՔՂԱՀ
ԻԿԻՆ

ԹօՋՁՁ

Թվ. :ՋՁՁ: (1537)| ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ :Բ: ԵՂԲԱՐՑ|, ԱՂԱՊԷԿԻՆ, ՊԷ|ԿԻՃԱՆԻՆ, ՈՐ ԵՆ| ՈՐԴԻՔ ՇԱՀ|ԻԿԻՆ:

**1497. Բ. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂԻՆ** *հեծյալ, որի առջևից փախչում է եղջերու, ոտների տակ օձեր, արևելյան ճակատին 7 տող.*

ԵՍՄԿԸՐ
ՏԻՉՍՈՐ
ԴԻՇԱՀԻ
ԿԻՆԿՆԿՍ:
ԽՆԱՋԻՋ
ՊԷԿԻՆԹՎ.
ՌԺԳ

ԵՍ ՄԿԸՐ|ՏԻՉՍ ՈՐ|ԴԻ ՇԱՀԻ|ԿԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ.| ԽԱՉՍ ԱՋԻՋ| ՊԷԿԻՆ. Թվ.| :ՌԺԳ: (1564):

Ծանոթ. *Այս զույգ տապանաքարերի գլխին մնում է մի մեծ խաչքարի պատվանդան՝ երկու փոսերով։*

**1498. ԽԱՉՔԱՐ**, *մեծ գեղաքանդակ, գտնվում է գերեզմանատան կենտրոնում, քիվին և խաչի տակ 2 տող.*

ԽՉՍԲԱՐԷԽՍ·ԱՏԻՍԻՆ·ՈՐԷՄԱ
+
ՅՐՄԷԼՔՈՆԻՆԵԱՌԱՋՆՈՐԴԻ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱՏԻՍԻՆ, ՈՐ Է ՄԱ|ՅՐ ՄԷԼՔՈՆԻՆ. ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ [ԳԵՂՈՅՍ]....:

Մանոթ. *Պատվանդանը մեծ է և երկու խաչքարի տեղով. հարավայինը չկա։ Արձանագրությունը չի ավարտված, ենթադրում ենք, որ շարունակվել է կից խաչքարի վրա, որը կորած է։*

*Հրատ. Լալայան, XIX, 15 (մեկ տողը միայն)։*
Լուսանկ. 306

**1499. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, օրորոցաձև՝ ագուցված պատվանդանի մեջ, հյուսիսային կողին՝ թամքած ձի, որի սանձից բռնել է մի մարդ, մի կին նվագում է երկլարանի սազ՝ նստած վիճակում։ Առաջներին կերակուրի պնակ, գինու զավ և հացեր. հարավային կողին՝ խորանների մեջ խաչեր։ Գտնվում է նախորդ խաչքարի դիմաց։ Արևելյան և արևմտյան ճակատներին 8 տող.*



ԹՎ. :ՋԴ.Թ: (1550)| ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ ՄԵԼՔ|ՈՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ| ԱԻԱՔԻՆ, ՈՐ Տ|ԴԼԱՑ ՀԱՍԱԿԱԻ| ՓՈԽԵՑԱԻ Ի ՔՍ.|ԷԹ.Ո.Դ. ՍՈ|Ի|Ք ՄԱՐՆ՝ ԱՏԻՍԻՆ։

Մանոթ. *Թվականն ունեցող մեկ տողը արևմայան ճակատին է։*

*Հրատ. Լալայան, XIX 15 (խիստ աղավաղված)։*

**1500. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, գտնվում է կից նախորդին՝ հյուսիսից. երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՏԻՍԻՆ, ՈՐ :Լ: (30) ՏԱ|ՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ Է ԿԱՑԵԱԼ ԳԵՂՈՑՍ։

*Հրատ. Լալայան, XIX, 15 (սխալմամբ ւէ (7) տարի)։*

**1501. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, հասարակ, գտնվում է գերեզմանատան հարավում, քիվին և թևերի արանքներում 3 տող.*



Խ|Ա|Չ|Ս| ԲԱՐԷԽԱԻ|Ս| ՄԱՐԿՈՍԻՆ...
ԹՎ.| :ՋԴ.Թ: (1550)։

**1502. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, օրորոցաձև, հյուսիսային կողին կենցաղային տեսարան և եղծված արձանագրություն, որից է միայն թվականը՝ նախորդի մոտ.*



ԹՎ. :ՋԴ.Թ: (1550)։

1503. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավում հեծյալ, ձեռքին հրացան, դիմացը եղջերու՝ ոտքերի տակ վիշապ, ապա երկու կենդանիներ՝ միացած մեկ մարդկային գլխի տակ: Արևմտյան ճակատին թևատարած արծիվ՝ մագիլներով բռնած գառ. արևելյան ճակատին 7 տող.

ԵՍՏՐՈՅՀ
ԱՆԷՍ· · Մ
ԲԽՆՍՈՍԷ
ԳԻՆՈՐԴԻԿ
ԱԽԻՃԱ
ՆԻՆ ԹՌՃ
Դ

ԵՍ ՏՐ. ՈՅՀ|ԱՆԷՍ... ՍԲ. ԽԱՉԱ ՈՍ[Է]|ԳԻՆ. ՈՐԴԻ ԿԱԽԻՃԱ|ՆԻՆ. ԹՎ. ՌՃԴ: (1655):

1504. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 7 տող.

ԹՎ
ՌՃԴ
ԱԾՈՂ
ՈՐՄԻ
ՓԱՆ
ՈՍԻՆ
ԷՔ

ԹՎ.| ՌՃԴ: (1655)| Ա.Ծ. ՈՂ|ՈՐՄԻ| ՓԱՆ|ՈՍԻՆ. |ՅԻՇԵՑԷՔ:

1505. ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ, երեք հատ, գերեզմանատան կենտրոնական մասում, իրար կից, պատկանում են մի գերդաստանի.

Ա. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԸ՝ տափակ, երեսին 3 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՇԱՀՈՒՄԻՆ
ԿՈՂԱԿԻՑՄԻՐՋԻՆ
ԹՌՃԻԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՇԱՀՈՒՄԻՆ|. ԿՈՂԱԿԻՑ ՄԻՐՋԻՆ.| ԹՎ. ՌՃԻԷ: (1678):

1506. Բ. ՀԱՐԱՎԱՅԻՆԸ՝ տափակ. երեսին 6 տող.

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏՀՐ
ԱՊԵՏԻՆ
ՈՐԴԻՄԻՐ
ՋԻՆ: ԹՎ.
ՌՃԼԴ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ ՀՐ|ԱՊԵՏԻՆ, ՈՐԴԻ ՄԻՐ|ՋԻՆ. ԹՎ.| ՌՃԼԴ: (1685):

1507. Գ. ԿԵՆՏՐՈՆԻՆ, տափակ, վրան 4 տող.

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՃԱՆԻՆ
ՈՐԴԻՄԻՐՋԻՆ
ԹՌՃԼԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՃԱՆԻՆ,| ՈՐԴԻ ՄԻՐՋԻՆ. ԹՎ. ՌՃԼԷ: (1688):

**1508.** *ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ, հինգ հատ, կենտրոնական մասում, իրար կից, պատկանում են մի գերդաստանի.*

*Ա. ՏԱՓԱԿ, երկաստիճան, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՍՈՒՔ
ԻԵԱՍԻՆ
ԹՎՌՃԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՍՈՒՔ|ԻԵԱՍԻՆ.|
ԹՎ. ՌՃԼ: (1681):

**1509.** *Բ. ՏԱՓԱԿ, երկաստիճան, երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՓԻԱՆԳԻՆ
ԿՂԱԿԻՑՍՈՒ
ԹՌՃԽ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՓԻԱՆԳԻՆ|. ԿՈՂԱԿԻՑ
ՍՈՒ|ՔԻԵԱՍԻՆ.|ԹՎ. ՌՃԽ: (1691):

*Ծանոթ. Ննջեցյալի անունը համարում ենք ենթադրական, միգուցե ՓԻՐՎԱՆԻ լինի:*

**1510.** *Գ. ՏԱՓԱԿ, եռաստիճան, երեսին 8 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ՍՕԼԹԱ
ՋԱԴԻՆ
ԱԶԻՆ
ԹՎՌՃ
ԼԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ| ՍՕԼԹԱՆՋԱԴԻՆ|, ԿՈՂԱԿԻՑ
ԷՎԱԶԻՆ. |ԹՎ. ՌՃԼԲ: (1683):

**1511.** *Դ. ՏԱՓԱԿ, երկաստիճան, երեսին 4 տող.*

ՀԱԳ Տ
ԱՄԻՐԻՆՈՐԴԻՍ
ՈՒՔԻԵԱՍԻՆ
ԹՌՃԼԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ԱՄԻՐԻՆ, ՈՐԴԻ
Ս|ՈՒՔԻԵԱՍԻՆ.| ԹՎ. ՌՃԼԹ: (1690):

**1512.** *Ե. ՏԱՓԱԿ, երկաստիճան, երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀ
ԱՆԳԻ
ՍՏԱՎ
ԱՆԷՍ
ԻՆ
ԹՎՌ
ՃԽԳ

ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻ|ՍՏ ԱՎ|ԱՆԷՍ|ԻՆ.
ԹՎ. ՌՃԽԳ: (1694):

*Ծանոթ. Գրիչը տառերի կաղապարներ է գործածել, Տ և Թ տառերի կաղապարները շրջված է դրել և այնպես էլ փորագրել:*

**1513.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ****, տափակ, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ԶԱՔԱՐԻՆՈՐԴԻ
ՊԵՏՐՈՍԻՆ
ԹՌՃԼԴ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ԶԱՔԱՐԻՆ, ՈՐԴԻ|
ՊԵՏՐՈՍԻՆ. |ԹՎ. :ՌՃԼԴ: (1685):

**1514.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ****, տափակ, երեսին 5 տող.*

ԱՍՀԱՆԳԻ
ՍՏԹՈՒՐՎԱ
ՆԴԻՆԿՂՑ
ՆԵՐՍԵՍԻՆ
ԹՎՌՃԼԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԹՈՒՐՎԱ|ՆԴԻՆ, ԿՈՂԱԿԻՑ
ՆԵՐՍԵՍԻՆ|. ԹՎ. :ՌՃԼԵ: (1686):

**1515.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ****, մեծ, օրորոցաձև, հարավային կողին հեծյալ՝ նետ ու աղեղը բռնած մեկ ձեռքով, առջևում զավ և հացիր բռնած մարդ, ապա մեծ և փոքր եղջերուներ՝ փախչելիս. ծայրին սեղան՝ վրան բաղմաթիվ պնակներ, հացեր և գավ, շուրջը երկու մարդ, մեկը սազ նվագող: Հյուսիսային կողին խոյաններ և խաչեր, շրջանակներին և արևելյան ճակատին 6 տող.*



ՄՐ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻ|Ս ՍԱԹԸԼՄԻՇԻՆ,
ՈՐԴԻ ԷՎԱԶԻՆ|; ԹՎ. :ՌՃԽ: (1691):|
ԲԱԶՈՒՄ ՍՈՒ|Ք ԵԹՈՂ ԾՆՈՂ|ԱՑՆ.
ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:

*Հրատ. Լալայան, XIX, 15 (անճանաչելիորեն աղավաղված)։*

**1516.** ***ԽԱՉՔԱՐ****, մեծ և գեղաքանդակ, կանգնած է գերեզմանատան արևելյան կողմում. քիվին և թիկունքին 4 տող.*



ԵՍ ՏՐ. ԱԶԱՐԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ
ՓՐԿՈՒԹԵ. ՀՈԳՈ| ՄԱՐՆ ԻՄ ԹՈՊԷԻ|Ն
ՀԱԻՐՆ ԻՄ| ՍԱՐԳԻՍԻՆ:

*Ծանոթ. Համարում ենք XVI դարի գործ։*

Լուսանկ. 307

**1517.*** ***ԽԱՉՔԱՐ****, ընկած է գերեզմանատան արևելքում, քիվին 1 տող.*

ՓԽՉԲԽԱ:ԱՂԱՅԵԿՈՆԹ···:

ՄՐ.ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱՂԱՅԵԿՈԻՆ... Թ.:

*Ծանոթ. XVI դարի գործ։*

**1518.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, արևելյան ճակատին, 6 տող.*

| | |
|---|---|
| ԵՍՋՈՐԱՊ<br>ԿԱՆԵՑԻ<br>ՄԲԽԱԲ<br>ԱԷԽԱՆ<br>ԱՄԱՐԻՆ<br>ՅԻՔՍ | ԵՍ ԶՈՐԱՊ ԿԱՆ⌊Գ⌋Ն⌊Ե⌋ՑԻ Մ̄Բ. ԽԱՉՍ Բ⌊Ա⌋Ր⌊Ե⌋ԽԱ⌊Ւ⌋Ս⌊Ի⌋ Ն⌊Ա⌋ՏԱՐԻՆ Յ⌊Ի⌋ ՔՍ։ |

**1519.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, արևելյան ճակատին 6 տող.*

| | |
|---|---|
| ԷՍՎԱՐԴԱ<br>ՆԵՍԿԱՆ<br>ԵՑԻՄԲԽ<br>ԱԲԱԽՍ<br>ՄԱՏԻՐՈ<br>ՍԻ | ԵՍ Վ⌊Ա⌋ՐԴԱ⌊Ն⌋ՆԵՍ ԿԱՆ⌊Գ⌋Ն⌊Ե⌋ՑԻ ՍԲ. Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋ Բ⌊Ա⌋Ր⌊Է⌋Խ⌊Ա⌋Ւ⌊Ս⌋ Մ⌊Ա⌋Ր⌊Տ⌋ԻՐՈ⌊Ս⌋Ի⌊Ն⌋։ |

**1520.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքրիկ, օրորոցաձև, հյուսիսային կողին կենցաղային տեսարան, արևելյան ճակատին շուռ տված գրերով և աջից ձախ՝ 4 տող.*

| | |
|---|---|
| ԱՅՍԷ<br>ՀԱՆ<br>ԳԻՍՏ<br>ԷՎԻՆ | ԱՅՍ Է⌊ ՀԱՆ⌊ԳԻՍՏ⌊ ԷՎԻՆ։[1] |

## ԾՈՎԱԿ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՋԱՂԱԼՈՒ)

*Գյուղի հին անունն անհայտ է, բայց XI դարից պահպանված գերեզմանական հուշարձաններն ապացուցում են նրա հին բնակավայր լինելը։ Ներկա գյուղը տեղավորված է փոսի մեջ, այն ժայռերի տակ, որոնցից մեկի վրա կա ուրարտական արձանագրություն։ Գյուղի մեջ հին հայկական հուշարձաններ չկան. գյուղամիջի եկեղեցին նոր է, նրա մուտքի բարավորի վրա ներքուստ մնում է կիսեղծ մի արձանագրություն՝ վերջին դարերի ոճի գրերով և անթվական (№ 1538)։ Հնում գյուղը տեղավորված է եղել հարավային կողմի ժայռերի գլխի հարթության վրա, նախաուրարտական բերդ-շենի արևմտյան եզրին, լճափին մոտ։*

*Այստեղ մնում են տնատեղերի և եկեղեցու ավերակներ ու փոքր խմբերով խաչքարեր։ Դրանցից մի խումբը մի շարքի կանգնած 7 խաչքարից է բաղկացած (որի պատճառով էլ վայրը կոչվում է «Յոթ եղբայր»)։ Բոլորն էլ հնագույն ոճի են։ Մեկի վրա կա փոքր հիշատակագրություն, իսկ մյուսի վրա, բարեբախտաբար, թվականը՝ 1013 (№1521)։ Այդ հին գյուղատեղիի հյուսիսային եզրին, գյուղի գլխին, ժայռերից վեր կա մի գերեզմանատուն, ուր կանգնած է մի հին կոթող, բայց արձանագրություններ չկան։*

*Արձանագրություններ ունեցող հուշարձանների երկրորդ վայրը գերեզմանատունն է, որը գտնվում է ներկա գյուղի արևմտյան բարձունքի վրա, հին գյուղատեղի հանդեպ, գետի լճին*

---

[1] *Լալայանն ունի նաև հետևյալ տարընթերցումը.* Այս է հանգիստ Շահումինի, կողակից Միրախինի. թվին ՌՃԽԵ (1696), *կարծում ենք, որ մեր 1505-ն է, աղավաղված. «Ազգ. հանդ.», XIX, 15։*